



Մայիսի 4-5-ը Երևանում անցկացվող Սանկտ Պետերբուրգի օրերի շրջանակում նախատեսված հանդիպումների համատեքստում Երևան քաղաքի պատմության թանգարանում մայիսի 4-ին կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Համագործակցություն թանգարանային գործի բնագավառում» թեմայով: Քննարկմանը մասնակցել են Սանկտ Պետերբուրգի՝ Լենինգրադի պաշտպանության և շրջափակման հիշատակի պետական թանգարանի տնօրեն Սերգեյ Կուրնոսովը, Սանկտ Պետերբուրգի «Մանեժ» կենտրոնական ցուցահանդեսային սրահի փոխտնօրեն Տատյանա Լարինան, Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի, Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի և «Կարեն Դեմիրճյանի թանգարանի» աշխատակիցները՝ տնօրենների գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում Էրեբունի թանգարանի գիտաշխատող Աստղ Պողոսյանը ներկայացրել է Պետական Էրմիտաժի և Երևանի հնավայրերի միջև ձևավորված համագործակցությունը:



Պատմական ակնարկներ են ներկայացվել Լենինգրադի պաշտպանության և շրջափակման հիշատակի պետական թանգարանի և «Մանեժ» կենտրոնական ցուցահանդեսային սրահի գործունեության, Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարանների հետ ունեցած թեմատիկ համագործակցության վերաբերյալ: Կողմերը քննարկել են նաև համագործակցության ուղղություններն ու երկու քաղաքներում փոխայցերի միջոցով թանգարանային ցուցադրություններ կազմակերպելու հեռանկարները: